ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «29» 08 2024թ N 2159-Ա

2024 ԹՎԱԿԱՆԻ՝ ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՆԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի N 138-Լ որոշման N 2 Հավելվածի 7.3 և 8.2 ենթակետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեբերի 28-ի N 2323-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը:

հրամայում եմ.

1. Հաստատել.

1) 2024 թվականի՝ տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության տրամադրման միջոցառման ընդհանուր դրույթները, շահառուների շրջանակը (այսուհետ՝ միջոցառում) ՝ համաձայն N1 հավելվածի.

2) Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար հումքի ներմուծման դիվերսիֆիկացմանն ուղղված պետական աջակցություն տրամադրման կարգը ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար միջազգային էլեկտրոնային առևտրի հարթակներում գործելու նպատակով ստացված խորհրդատվական ծառայություններից օգտվելու միջոցով օգտահաշվով վաճառքների իրականացման աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

4) Միջոցառման շրջանակում էլեկտրոնային առևտրի հարթակներում գործելու նպատակով ստացված խորհրդատվական ծառայությունների աջակցության տրամադրման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

Ստորագրող
ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ
2102870448

2024-08-23 12:39:01 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ

ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
«23» 08 2024թ № 2159-Լ

2024 ԹՎԱԿԱՆԻ՝ ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՆԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

I. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Միջոցառման նպատակներն են.

   1) խթանել տեքստիլ արդյունաբերության ոլորտի մրցունակության բարձրացումը,
   2) նպաստել հայկական արտադրանքի միջազգային շուկաներում հասանելիության ապահովմանը,
   3) խրախուսել հայ արտադրողին ապահովել մրցունակ արտադրանքի ներկայացվածությունը և առևտուրը միջազգային շուկաներում,
   4) նպաստել նոր, ավելի գրավիչ շուկաներ մուտք գործելուն,
   5) նպաստել ոլորտի կայունության զարգացմանը՝ հումքի ներկրման և արտաքին առևտրի խթանման միջոցով :

2. Սույն հրամանում միջոցառման իմաստով

   1) **ոլորտ** է համարվում՝ Հայաստանի Հանրապետության էկոնոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N562-Ն հրամանով հաստատված C(UH)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(UH)14 «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակները ներառող ոլորտը:
   2) հումք է համարվում՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 2-ով սահմանված «պաշարներ» ակտիվները:

3. Միջոցառմամբ նախատեսվում է ունենալ աջակցության **2 հիմնական ուղղություն.**

1) Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար հումքի ներմուծման դիվերսիֆիկացմանն ուղղված պետական աջակցություն՝ վարկերի սուբսիդավորման տեսքով,
2) Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար միջազգային էլեկտրոնային առևտրի հարթակներում գործելու նպատակով ստացված խորհրդատվական ծառայություններից օգտվելու միջոցով օգտահաշվով վաճառքների իրականացման աջակցության տրամադրում:

4. Միջոցառման շրջանակներում **շահառու** է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային այն կազմակերպությունները և հաշվառված անհատ ձեռնարկատերերը, որոնց՝ ծրագրին դիմելու օրվան նախորդող օրացուցային տարվա համախառն եկամուտի առնվազն 80 %-ը ձևավորվել է՝ Հայաստանի Հանրապետության էկոնոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N562-Ն հրամանով հաստատված C(UH)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(UH)14 «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակներից և դիմում-հայտ է ներկայացրել միջոցառման ուղղություններից առնվազն որևէ մեկից օգտվելու համար.
2) Շահառուն հայտը ներկայացնելու օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորություններ չպետք է ունենա:
3) Շահառուն կարող է ստանալ փոխհատուցում սույն միջոցառման աջակցության երկու ուղղություններով, ընդ որում՝ յուրաքանչյուր աջակցության ուղղության մասով միայն մեկ անգամ:

5. Միջոցառման ակնկալվող **արդյունքները.**

1) արտահանման ծավալների աճ,
2) արտահանման շուկայի դիվերսիֆիկացում,
3) հումքի ներկրման շուկաների դիվերսիֆիկացում,

4) արտադրանքի մրցունակության բարձրացում,

5) ոլորտում արտաքին առևտրի գործընթացների բարելավում,

6) միջազգային շուկաներում ներկայացվածության ապահովում:

6.Սույն միջոցառման հիման վրա դիմումները կարող են ներկայացվել մինչև 2024 թվականի նոյեմբերի 15-ը:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
«23» 08 2024թ No 2159-Լ

ԿԱՐԳ

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՄՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար հումքի ներմուծման դիվերսիֆիկացմանն ուղղված պետական աջակցությունն իրականացվում է վարկերի սուբսիդավորման տեսքով.

1) Աջակցությունը տրամադրվում է շահառուին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություն) Չինաստանից, Հնդկաստանից, Իտալիայից, Հարավային Կորեայից և Բանգլադեշից հումքի ներկրման նպատակով ստացվող վարկերի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով: Ընդ որում, վարկերի վերադարձի ռիսկն ամբողջությամբ կրում է ֆինանսական կազմակերպությունը, ինչպես նաև պայմանների խախտման դեպքում սուբսիդավորման գումարները բանկի միջոցով ենթակա են վերադարձման՝ ֆինանսական կազմակերպության և շահառուի միջև կնքվող պայմանագրով ամրագրված կարգով:
2) Աջակցության շրջանակներում տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝
   ա) արժույթը՝ դրամով կամ արտարժույթով.
   բ) վարկի պայմանագրի ժամկետը՝ մինչև 24 ամիս.
   գ) սուբսիդավորման ժամանակահատվածը՝ մինչև 6 ամիս:
3) վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով.

4) տոկոսադրույքի սուբսիդավորման չափը՝ 5%:

2. Շահառուն՝ միջոցառման շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով դիմում է գործընկեր ֆինանսական կազմակերպություն,

3. Ֆինանսական կազմակերպությունը՝ գնահատելով շահառուի վարկունակությունը, վճարունակությունը և ստացվող վարկի օգտագործման՝ սույն հրամանի պայմաններին համապատասխանությունը, հաստատում է շահառուի կողմից միջոցառման շրջանակներում վարկի ստացումը,

4. Ֆինանսական կազմակերպությունը շահառուին վարկը տրամադրում է սուբսիդավորվող տոկոսադրույքի հաշվարկմամբ,

5. Ֆինանսական կազմակերպությունը՝ սույն հավելվածով հաստատված ձև 1-ով յուրաքանչյուր ամիս հայտ և հաշվետվություն է ներկայացնում էկոնոմիկայի նախարարություն՝ սուբսիդավորում ստանալու նպատակով,

6. Էկոնոմիկայի նախարարությունը իրականացնում է սուբսիդավորումը՝ ֆինանսական կազմակերպության հայտի հիման վրա, եթե այն համապատասխանում է սույն հրամանի պահանջներին:

7. Տոկոսադրույքների սուբսիդավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրի հիման վրա:

8. Մոնիթորինգն իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության մասնագիտական ստորաբաժանման կողմից՝ անհրաժեշտությամբ պայմանավորված նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության և ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով՝ տարեկան առնվազն 1 անգամ:

9.Մոնիթորինգի շրջանակներում փաստաթղթերի անճշտությունների, անհամապատասխանությունների կամ կեղծիքների բացահայտման դեպքում փոխհատուցման տրամադրումը դադարեցվում է, իսկ ամբողջ ժամանակահատվածում փոխհատուցված գումարը հետ է վերադարձվում:

Ֆինանսական կառույց ՖԿ՝ _____

Հայտի ժամանակահատված _____

Հայտի ներկայացման ամսաթիվ՝ _____

Ներկայացվող կառույցի անվանումը՝ ՀՀ ԷՆ

ՀԱՅՏ

2024 ԹՎԱԿԱՆԻ՝ ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՄՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	ՎԱՐԿԱՌՈՒ				ՎԱՐԿ							ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ			այլ նշումներ
	անվանում/ազգանուն, անուն	**ՀՎ ՀՀ**	**հասցե/գործունեության**		վարկի տրամադրման պայմանագրի համար N	վարկի պայմանագրային գումար/ ՀՀ դրամ	վարկի տրամադրման նպատակը	վարկի տրամադրման ամսաթիվ	վարկի ավարտի ամսաթիվ	վարկի տարեկան տոկոսադրույք	ամբողջ տոկոսագումար՝ հաշվետու ամսվա ընթացքում /ՀՀ դրամ	սուբսիդավորման ավարտի ամսաթիվ	սուբսիդավորման ենթակա տոկոսային կետ	սուբսիդավորման ենթակա տոկոսագումար/ ՀՀ դրամ	
			մարզ	**համայնք**											
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
	ԸՆԴԱՄԵՆԸ														

Հարգանքով՝
ՖԿ
Գործադիր տնօրեն՝

_____

Լիազորված անձ՝
պաշտոն , անուն ազգանուն, ստորագրություն, կնիք

Ֆինանսական կառույց ՖԿ՝ ____________________

Հաշվետվության ժամանակահատված ____________________

Հաշվետվության ներկայացման ամսաթիվ՝ ____________________

Ներկայացվող կառույցի անվանումը՝ ՀՀ ԷՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ՝ ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՄՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	ՎԱՐԿԱՌՈՒ				ՎԱՐԿ								ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ				
	անվանում/ազգանուն, անուն	ՀՎՀՀ	հասցե/գործունեության		վարկի տրամադրման պայմանագրի համար N	վարկի պայմանագրային գումար/ՀՀ դրամ	վարկի տրամադրման նպատակը	վարկի տարեկան տոկոսադրույք	տրամադրված արտոնյալ ժամկետ	հաշվետու ամսվա վերջի դրությամբ վարկի/լիզինգի մայր գումարի մնացորդ /ՀՀ դրամ	գրավի առարկա	գրավի առարկայի շուկ. արժեք/ՀՀ դրամ	վարկառուի կողմից վճարված ամբողջ տոկոսագումար՝ հաշվետու ամսվա ընթացքում /ՀՀ դրամ	վճարված չսուբսիդավորվող տոկոսագումարի ամսաթիվ	սուբսիդավորման ենթակա տոկոսային կետ	սուբսիդավորման ենթակա աճողական տոկոսագումար/ՀՀ դրամ	այլ նշումներ
			մարզ	համայնք													
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
	ԸՆԴԱՄԵՆԸ՝																

Հարգանքով՝
ՖԿ
Գործադիր տնօրեն՝

____

Լիազորված անձ՝
պաշտոն , անուն ազգանուն, ստորագրություն, կնիք

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
«23» 08 2024թ No 2159-Լ

ԿԱՐԳ

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՕԳՏԱՀԱՇՎՈՎ ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. էլեկտրոնային առևտրի հարթակներում գործելու նպատակով ստացված խորհրդատվական ծառայություններից օգտվելու միջոցով օգտահաշվով վաճառքների իրականացման աջակցության տրամադրման պայմաններն են.

1) Փոխհատուցել ոլորտի ընկերությունների միջազգային էլեկտրոնային առևտրի հարթակներում գործելու նպատակով տրամադրված խորհրդատվական ծառայությունների ծախսերի 50%-ը, բայց ոչ ավել քան 1 000 000 դրամը եթե՝

ա) խորհրդատվական ծառայությունը մատուցվել է Amazon կամ Walmart էլեկտրոնային հարթակներում գործելու նպատակով,

բ) մատուցված խորհրդատվական ծառայությունների արդյունքում ստեղծվել է էլեկտրոնային հարթակի ակտիվ օգտահաշիվ,

գ) ստեղծված օգտահաշվի միջոցով Amazon կամ Walmart էլեկտրոնային հարթակների միջոցով իրականացրել է վաճառք, ընդ որում՝ դիմելու օրվան նախորդող առավազն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է գործարք:

դ) խորհրդատվական ծառայությունը մատուցվել է սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2024 թվականի նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում:

2. Աջակցություն ստանալու նպատակով դիմողները պարտավոր են Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) secretariat@mineconomy.am էլեկտրոնային հասցեով ներկայացնել՝

1) դիմում-հայտ՝ համաձայն սույն հավելվածով սահմանված ձև 2-ի,

2) տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ,
3) դիմողի գրավոր համաձայնությունը, որպեսզի նախարարությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից (այսուհետ՝ ՊԵԿ) ստանա դիմողի վերաբերյալ սույն միջոցառման շրջանակներում պահանջվող տեղեկատվությունը,
4) ստացված խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ հաշիվ-ապրանքագրի պատճեն, որը պետք է պարունակի նշում, որ խորհրդատվական ծառայությունը տրամադրվել է Amazon կամ Walmart հարթակներում գործելու նպատակով,
5) խորհրդատվական ծառայությունների արդյունքում ստեղծված օգտահաշվի ստեղծման ամսաթիվը, տեսքը և գործարքների պատմությունը:

3. Նախարարությունը դիմում-հայտը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում ՊԵԿ պաշտոնական գրությամբ ներկայացնում է հարցում՝ շահառուի եկամուտների գծով հարկային պարտավորությունների և ձևավորված շրջանառության տեղեկատվության վերաբերյալ:

4. Սույն կարգի 2-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը ստանալու և միջոցառման պահանջները բավարարելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում մասնագիտական ստորաբաժանման կողմից տրված դրական եզրակացության հիման վրա, նախարարության և շահառուի միջև կնքվում է աջակցության տրամադրման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի օրինակելի ձևը հաստատված է սույն հրամանի N4 հավելվածով: Աջակցությունը տրամադրվում է պայմանագրի կնքման դեպքում:

5. Կնքված պայմանագրով սահմանված գումարը փոխանցվում է պայմանագրում նշված բանկային հաշվին՝ շահառուի հետ պայմանագիրը ստորագրելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Աջակցությունը տրամադրվում է պայմանագրի կնքման և տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների առկայության պարագայում:

6. Կնքված պայմանագրով սահմանված գումարը փոխանցվում է պայմանագրում նշված հաշվարկային հաշվին՝ շահառուի հետ պայմանագիրը ստորագրելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Դիմողի հետ չի կնքվում պայմանագիր, եթե դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերով տրամադրված տեղեկությունները և տվյալները ոչ ամբողջական կամ ճշգրիտ չեն և չեն համապատասխանում միջոցառման պահանջներին:

8. Մոնիթորինգն իրականացվում է Էկոնոմիկայի նախարարության՝ մասնագիտական ստորաբաժանման կողմից՝ անհրաժեշտությամբ պայմանավորված նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության և ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով՝ տարեկան առնվազն 1 անգամ:

9.Մոնիթորինգի շրջանակներում փաստաթղթերի անճշտությունների, անհամապատասխանությունների կամ կեղծիքների բացահայտման դեպքում փոխհատուցման տրամադրումը դադարեցվում է, իսկ ամբողջ ժամանակահատվածում փոխհատուցված գումարը հետ է վերադարձվում:

10. Սույն միջոցառման 6-րդ կետով սահմանված դեպքում պայմանագիր չկնքելը չի բացառում դիմողի կողմից՝ սույն կարգի 1-ին կետով սահմանված, նոր դիմում-հայտ ներկայացնելը:

11. Պայմանագիր չկնքելու վերաբերյալ դիմողին տեղեկացումը կատարվում է դիմում-հայտում նշված էլեկտրոնային հասցեի միջոցով՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

12. Շահառուն կարող է ստանալ փոխհատուցում սույն հրամանի N1 Հավելվածի 3-րդ կետով սահմանված աջակցության երկու հիմնական ուղղություններով, ընդ որում՝ յուրաքանչյուր աջակցության ուղղության մասով միայն մեկ անգամ:

13.Սույն ծրագրի հիման վրա դիմումները կարող են ներկայացվել մինչև 2024 թվականի նոյեմբերի 15-ը:

Ձև 2

Հայաստանի Հանրապետության

էկոնոմիկայի նախարարության

գլխավոր քարտուղարին

_____-ից

(Դիմողի անուն,ազգանուն, պաշտոն)

_____

(Կազմակերպության անվանում, գտնվելու վայր, հեռախոս, էլ. հասցե)

ՀՎՀՀ՝_____

«__.__.2024»

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՕԳՏԱՀԱՇՎՈՎ ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույն դիմում-հայտով խնդրում եմ տրամադրել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի «__.__._____» N__-ի հրամանով հաստատված «2024 թվականի՝ տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության տրամադրման միջոցառման» էլեկտրոնային առևտրի հարթակներում գործելու նպատակով ստացված խորհրդատվական ծառայություններից օգտվելու միջոցով օգտահաշվով վաճառքների իրականացման աջակցության շրջանակում փոխհատուցում:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որպեսզի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստանա դիմող կազմակերպության հարկային պարտավորությունների և ձևավորված շրջանառության վերաբերյալ տեղեկատվություն:

Կից ներկայացնում եմ՝

1. տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ
2. ստացված խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ հաշիվ-ապրանքագրի պատճեն, որը պետք է պարունակի նշում, որ խորհրդատվական ծառայությունը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության էկոնոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N562-Ն հրամանով հաստատված C(UH)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(UH)14 «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությանը Walmart կամ Amazon հարթակներում գործելու վերաբերյալ:
3. ստացված խորհրդատվական ծառայությունների արդյունքում ստեղծված օգտահաշվի ստեղծման ամսաթիվը, տեսքը և գործարքների պատմությունը:

Դիմող՝ _____

(անուն, ազգանուն, գբաղեցրած պաշտոն, ստորագրություն)

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
«____»_____2024թ №_____

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N -__

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՕԳՏԱՀԱՇՎՈՎ ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Երևան __._____. 2024թ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար _____-ի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ (նշել անվանումը՝ _____) (այսուհետ՝ Շահառու), ի դեմս _____, ով գործում է ընկերության կանոնադրության/պետական գրանցման հիման վրա, մյուս կողմից, այսուհետ երկուսը միասին Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի «2024 թվականի՝ տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության միջոցառումը հաստատելու մասին» N__-Լ հրամանը (այսուհետ՝ Հրաման), Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեբերի 28-ի N 2323-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության տրամադրման միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) շրջանակներում Շահառուին տրամադրել փոխհատուցում միջազգային էլեկտրոնային առևտրի հարթակներում գործելու նպատակով ստացված

խորհրդատվական ծառայությունների աջակցության փոխհատուցման տրամադրման աջակցության համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Նախարարությունն իրավունք ունի Շահառուից պահանջել Հրամանով սահմանված փաստաթղթերը:

2.2. Նախարարությունը պարտավոր է Հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Շահառուի հաշվեհամարին փոխանցել փոխհատուցման գումարը: Փոխհատուցումը տրամադրվում է պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

2.3. Շահառուն իրավունք ունի Նախարարությունից պահանջել Հրամանի պահանջներին համապատասխան փոխատուցման գումարը Հրամանով սահմանված ժամկետներում:

2.4. Շահառուն պարտավոր է Նախարարությանը տրամադրել Հրամանով պահանջվող ամբողջական և հավաստի տեղեկատվություն:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի շրջանակներում փոխհատուցման չափը որոշվում է համաձայն Շահառուի կողմից ներկայացված Հրամանով սահմանված փաստաթղթերի:

3.2. Նախարարությունը վճարման ենթակա գումարը, որը կազմում է _____ դրամ, Շահառուին փոխանցում է Պայմանագրում նշված բանկային հաշվին՝ անկանխիկ եղանակով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրի պահանջների խախտման համար Կողմերը կրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Կողմերի միջև Պայմանագրի հիման վրա ծագող այն բոլոր հարաբերությունները, որոնք կարգավորված չեն Պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Պայմանագրի առնչությամբ ծագած վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը քննվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

6.2. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, հայերեն լեզվով, __ էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

6.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

6.4. Սույն պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են հրամանով սահմանված կարգով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ 8. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախարարություն
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար

Կ.Տ.

Շահառու

Հասցե՝

Հ/Հ
ՀՎՀՀ